№ 191 Հոկտեմբերի 30 (Նոյեմբերի 11) 1880 Հոկտեմբերի 30 (Նոյեմբերի 11) № 191

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստարաթաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն վեղով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր քառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցներ եւ Էջմիածինը։—Ներքին տեսութիւն։ Երկու խօսք։ Նամակ Շուշուց։ Նամակ Ցարի ցնծից։ Նամակ Կարսից։ Նամակ Ղազարից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրներ։—Ցայտարարութիւններ։

ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆ

Մեր ազգային ուսումնարանների գործը ամբողջ դարերի ընթացքում եղել է և մինչև այսօր էլ է մեր հոգևորականների ձեռքում։ Եկեղեցին և դպրոցը մեր մէջ սերտ կապերով են եղել կապված իրար հետ. շինվել է եկեղեցի, նրա կից հիմնվել է դպրոց։ Մեր ուսումնարանները, լինելով այսպիսի հանգամանքների մէջ, անկասկած կարող էին նախանձելի դրութեան հասնել, եթէ այդ ուսումնարանների առաջնորդները, մեր հոգևորականները, փոքր ի շատէ զարգացած անձինք լինէին։

Էջմիածինը օրըստօրէ աւելացնելով ազէտ հոգևորականների թիւը, ուղարկելով այդպիսիներին հայաբնակ տեղերը ժողովրդին հովուելու, դրանց ձեռքն էր դնում ազգային քարոյական և մտաւոր կրթութեան գործը։

Մի քահանայ, ինքն թէ քարոյական և թէ մտաւոր կրթութիւնից զուրկ լինելով, մինչև անգամ հազիւ հազ կարդալ իմանալով, բաց է անում դպրոց, հաւաքում է մանուկներին, ամբողջ տարիներ է պահում նրանց իր ուսումնարանում, որովհետև մի կողմից նրանցից իւրաքանչիւրը տէր հօրը տարեկան մի քանի ռուբլ եկամուտ է տալիս և միւս կողմից հարկաւոր եկած ժամանակն էլ տէրտերի կամ տիրացուի ընտանեկան ծառայութիւններ է կատարում։ Տէր-Հայրը ինքն սուրբ գիրք հազիւ է կարդում և իր դաստաւորութիւնը սկսում է նոյն իսկ սուրբ գրքից. ի՞նչ անէ ողորմելին, որ նա ուրիշ գրքերի գոյութեան մասին հասկացողութիւն անգամ չունի։ Ուր որ նայէիք, ամեն տեղ մի և նոյն տխրալի երևոյթներն էին կրկնվում և կարող ենք խոստովանել, որ մինչև այսօր էլ կան շատ և շատ տեղեր, ոչ թէ ընկած գիւղերում, այլ մինչև անգամ քաղաքներում, որտեղ այս տեսակ երևոյթները դեռ տեղիք ունեն։

Հա՛ այս տեսակ մանկավարժները փոխանակ ուսում ստանալու, փոխանակ զարգանալու, ամբողջ տարիների ընթացքում սիստեմաբար բթանում էին։

Ապագան ոչինչ չէր խոստանում և բացի վերջնական կորուստից չէր կարող խոստանալ, եթէ ազգային մտաւոր և բարոյական զարգացման մէջ չը սկսէին մտանակցել ո՛չ-հոգևորականները. մի կողմից ստեղծվեց մեզանում մամուլը, միւս կողմից աշխարհականները, փոքր ի շատէ ծանօթանալով ժամանակակից պահանջների հետ, ուսման հետ, ձեռք են մեկնում հոգևորականներին ուսումնարանների գործերը առաջ տանելու համար։ Հենց այդ օրից, կարելի է ասել, սկսվում է հայերի վերածնելութիւնը, յարուցանվում է յոյսը։

Թէև այս բոպէիս էլ չենք կարող պարծենալ մեր դպրոցներով, բայց այնու ամենայնիւ չենք կարող չը խոստովանել, որ կայ մի առանձին ձգտումն նրանց բարձրացնելու համար։ Մեր դպրոցները դեռ գուցէ շատ շատ տարիներ լինեն անմխիթար դրութեան մէջ, մինչև մեր երիտասարդութիւնը մեզ դպրոցի ամբողջ գնդերով դիմէ դէպի իրաւաբանութիւն, բժշկականութիւն ուսանելը և մանկավարժութեան վրա ամենևին ուշադրութիւն չը դարձնի, իսկ Էջմիածինը իր կողմից չը դադարի ամեցնել անպատրաստ հոգևորականների թիւը, որոնք ընականապէս ժողովրդի, մանաւանդ գիւղերում համարեա միակ դաստիարակիչներ են։

Այս տարի, ինչպէս լրագիրները մեզ հաղորդեցին, Էջմիածինը արաւ մի համակրելի քայլ դէպի առաջ, նա իր հաշվով ուղարկեց իր ուսում առացած վարդապետներից մէնին արտասահման մանկավարժութեան մէջ կատարելագործվելու։ Այս լուրը, իբրև մի նշոյլ, որ Էջմիածինը սկսում է արթնանալ իր խորքնից, ուրախութիւն պատճառեց շատերին, բայց մի միշտ յետադէմ թերթը այս դէպքումն էլ համարձակեց աղաղակել դրա դէմ։ „Ի՞նչ հարկաւոր էր ի զուր տեղ փողեր ծախսել, ասում էր վերոյիշեալ թերթը. այն ուսումն էլ բաւական էր, ինչ ստացել էր վարդապետը...“ և այլն։

Մենք համոզված ենք, որ Էջմիածինը եթէ արել է մի այդպիսի քայլ, ուշադրութիւն չի դարձնի այդ տեսակ յանդիմանութեան վրա և փոխանակ իր հոգևորականներին տուփ ձեռքին տալու և նրանց ամեն հայաբնակ քաղաքներ ուղարկելու հանգանակութիւն անելու համար, այսուհետև իր սրբազան պարտաւորութիւն կը համարի հոգևորականութեան մտաւոր զարգացման նպաստելը։

Ցայտնի է, որ առաջիկայ տարուայ ամառը լինելու են հայոց ուսուցչական ժողովներ։ Նախապատրաստական նպատակով կազմած մանաւոր ժողովին անկարելի է նիւթական միջոցներ գտնել ամեն չքաւոր ուսուցչի Թիֆլիս գալու և մի երկու ամիս այսպիսի թանգ քաղաքում ապրելու համար։

Իսկ մանաւանդ մեր այն հոգևորականների համար, որոնք ցրուած են զանազան գիւղերում և մանկավարժութեան վրա ամենևին գաղափար չունենալով, ուսուցչական պաշտօններ են վարում, այդ տեսակ ուսուցչական ժողովներին ներկայ գտնվելը մենք ոչ թէ միայն օգտաւէտ, այլ միանգամայն անհրաժեշտ ենք համարում։

Էջմիածինը բաղմացրել է այդ ուսուցիչների թիւը, նա սխալ է գործել թող գտնէ այժմ, երբ միջոց է տրվում նրան իր սխալը փոքր ի շատէ ուղղելու, իր դէմքը ուրիշ կողմ չը դարձնի. նա պարտական է ազգի առաջ միջոցներ որոնել և ամեն կերպի աշխատել, որ հոգևորականներ-ուսուցիչներն ևս ներկայ գտնվեն ուսուցչական ժողովներին։ Նրանք այստեղ կարող են դասդասարար ստանալ առհասարակ ուսումնարանի պահանջների վրա, կը լսեն օրինակելի դասեր և այլն, մի խօսքով, այստեղ կարող են փոքր ինչ կրթվել։

Թող Էջմիածինը, եթէ ուրիշ միջոցների չէ կամենում կամ չէ կարող դիմել իր ուսեալ հոգևորականների ճարտարութիւնը այս անգամ գործ դնել այդ նպատակի համար. կարող ենք հաւատացնել նրան, որ սա հազար անգամ աւելի կարևոր է, քան Էջմիածնի ճեմարանի ենթարանը։

Միրզա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Զարմանալի՜ է, թէ մեր հասարակութիւնը ո՛րքան փոքր է ըմբռնում իր ազգի լուսաւորութեան գործը, ո՛րքան անտարբեր է դէպի ամենայն ձեռնարկութիւն, որ ազգային է։ Եւ այդ հանգամանքն աչքի առաջ ունենալով համարձակ կարող ենք ասել, որ Թիֆլիսում հասարակութիւն չը կայ. միայն մի քանի անհատներ կան, որոնք խելքի ու փողի ներկայացուցիչ համարվելով ամեն հասարակական գործերի մէջ ևս ցոյց են տալիս իրանց մարդկային ամենակարողութիւնը և ամենուրեքութիւնը։ Մի և նոյն անձինք, որոնք մի անգամ՝ գիտութեամբ, թէ անգիտութեամբ, կամայ, թէ ակամայ ընտրվել են մի ընկերական ձեռնարկութեան մէջ՝ միշտ էլ երևում են ուրիշ բոլոր նմանօրինակ գործերում։ Արդեօ՞ք, մի առանձին աստուածային ազդեցութեամբ են սահմանված նոքա, որ ո՛չ մի ժամանակ և ո՛չ մի տեղ վերը նշարկի չեն։ Իսկ այս ցաւալի երևոյթը մեր հասարակութեան մտաւոր անշարժութեան տխուր հետևանքն է։

Հեռու չը գնանք։ Մեր 19-ին նեբսիական ազգային հոգևոր դպրոցի համար պէտք է ընտրվի նոր հոգաբարձութիւն։ 5-ին կոնսիստորիայի միջնորդութեամբ ամեն հայոց եկեղեցիներում ծանուցումն եղաւ, որ նոցանից իւրաքանչիւրը իր ժողովրդի միջից երեք պատգամաւոր ընտրի։ Արդէն մեծ մասամբ պատգամաւորների ընտրութիւնը կայացած է։ Բայց ի՞նչպէս են ընտրվել նոքա. ի՞նչպէս են ընտրվել այն անձինք, որոնցից և որոնց ձեռքով պէտք է ընտրվեն հայոց միակ ազգային դպրանոցի զեկավարները...։ Մատնելն անգամ ցաւալի է։ Խօսք չը կայ, որ անչնչան բացառութիւններ կը լինեն։ Բայց, որքան մեզ յայտնի է, մեծ մասամբ չեն ընտրված, ինչպէս հարկն է։ Մեր 5-ին աւագ կամ աւագ համարվող քահանաները պէտք է յայտնէին իրանց ժողովրդին՝ ընտրելու մասին։ Սակայն՝ ո՞վ չը գիտէ, որ մեր քահանաներից ինչպէս ամեն ազգային գործերում, նոյնպէս և այս գործում, կախված է շատ բան—թէ յառաջադիմութիւն և թէ յետադիմութիւն, թէ լոյս և թէ խաւար։ Բայց ո՞ւր է էն աջը, որ բռնի էն խաչը։ Քահանան պէտք է Աստուծոյ խօսքը քարոզող լինի։ Բայց սովորաբար քարոզութիւնը մեր քահանաների համար մեծ-պաս է։ Գալիս է իսկական մեծ պասը և նոքա սկսում են քարոզել նկարագրում են սատանայի չարագործութիւնը, հրեշտակի բարեգործութիւնը, գժոխքի սարսափը, մազէ կամուրջը, կպէ կարաբը, մեր հայրապետների ու սրբերի ճգնաւորական կեանքը և այլ այդպիսի բովանդակութիւն ունեցող անբովանդակ փիլիսոփայութիւններ, որոնցով ժողովրդին մի քայլ յառաջ տանելու փոխանակ՝ գիա մի քանի քայլ էլ յետ են տանում։ Արդարև, բա-

ցառութիւն կայ. բայց անձրևի կաթիլը ծովի մէջ անհետանում է:

Իսկ մի այսպիսի նշանաւոր դէպքում, երբ իւրաքանչիւր քահանայ մեծ պարտականութիւն ունի կատարելու. երբ նա պէտք է բացատրի իր ժողովրդին նախ՝ ազգութեան գաղափարը, ապա նորա միակ դրօշակի բարձր նշանակութիւնը ռուսահայոց համար. երբ նա պէտք է բացատրի ժողովրդին, թէ գլխաւորապէս կրթված, գործունեայ և դպրանոցի զէկը իրանց ձեռքը առնող հոգաբարձուներ են հարկաւոր դպրանոցին. երբ պէտք է հասկացնի, որ այդպիսի հոգաբարձուներ ընտրելու համար էլ հարկաւոր են բանիմաց և դպրոցական գործին ի մասուստ ծանօթութիւն ունեցող անձինք,—ահա՛ մի այսպիսի ծանր ժամանակ, նոքա մեծ մասամբ բաւականանում են միայն մի քանի համառօտ ու մեռած խօսքերով ծանուցանել ժողովրդին, թէ. «Ներսիսեան դպրոցին հոգաբարձուներ են հարկաւոր. ուրեմն ընտրեցէ՛ք ձեր մէջից երեք պատգամաւոր, որ գնան ու հոգաբարձուք ընտրեն:»

Բանն ա՛յն է, որ՝ ինչպէս լսել ենք մի քանի քահանաներից, արդէն նոյն օրն և եթէ եկեղեցում ներկայ գտնված մի քանի անձինքներից ընտրել են պատգամաւորները: Բայց ինչո՞ւ ամիսի 19-ին լինելու հոգաբարձական ընտրութեան մասին 3-ին են ծանուցանում, երբ նոքա նոյն օրն և եթէ պէտք է պատգամաւոր ընտրեն: Չէ՞ որ 14 օր տուած ժամանակն այն նպատակով է միայն, որ որքան կարելի է, լաւ մտածված լինի խնդիրը, որպէս զի ընտրվելը անձինք լինեն այնպիսիք, որոնք յիրաւի կարող են արդարացնել իրանց ընտրող ժողովրդի յոյսերը:

Իսկ Զորաբաշի ս. Գէորգ եկեղեցում մինչև անգամ աւելորդ համարելով ժողովրդին առաջարկել այդ ընտրութիւնը՝ իրանք երկու քահանաներն են ընտրում իրանց ցանկացած անձանց: Կարծես, ժողովուրդն իրանք են։ Եւ ի՞նչ ենք լսում Պատգամաւորներից մէկը՝ մի քիչ մեծախոշ ճատոնի վերաբերմամբ վարձառական է, որ մեր երէցփոխական հաշուետուութեան օրը վարդապետին «պարուն հայր սուրբ ջան» ասելով էր դիմում:

Գուցէ, ընթերցողը կարծում է, որ մենք մեզ ընտրելու համար ենք խօսում։ Թո՛ղ այդպէս էլ կարծի։ Մենք ամենայն իրաւամբ կարող ենք պահանջել, որ քիչ մի ճատոնի փոխանակ մեզ ընտրեն։ Եթէ ժամաւորին կարելի է ընտրել, ինչո՞ւ չի կարելի ընտրել մեզ, որ ոչ միայն նոյն եկեղեցու ժամաւոր, այլև ծուխ ենք ու երէցփոխան՝ թէպէտ այդ վերջին տիտղոսով մենք չենք պարծենում։ Մենք այդպիսի ընտրութիւն՝ թէ՛ քահանայից և թէ՛ ժողովրդի կողմից ըստ ամենայնի անկանոն ենք համարում։ Ուրիշ բան է, եթէ յարմարաւոր անձն չունենալու պատճառով լինէին այդպէս անելիս։ բայց երբ կայ, ի՞նչ հարկն է ստիպում այդպէս վարվել, եթէ խաւար կիրքն ու կոյր նախանձը չեն գլխաւոր դեր կատարողները։ Իսկ մեր պատգամաւոր ընտրվելու ցանկութիւնը ոչ թէ այն պատճառով է, որ Ներսիսեան դպրանոցումն էլ հոգաբարձու ընտրվենք, որ մեր մտքումն անգամ չէ կարող անցնել, այլ այն է, որ մեր եկեղեցին էլ կարողանայ տալ այնպիսի անձինք, որոնք կարող են այն օրինաւոր պատգամաւորների շարքումը դասվիլ, որոնց անձնաւորութիւնը կարող է երաշխաւոր լինել լաւ հոգաբարձութիւն ընտրելու մասին՝ հեռու ամենայն վնասակար կրքերից։ Ուրիշ ոչինչ։

Ց. Նազարեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԻՑ

Հոկտեմբերի 18

Մարդկութեան կեանքի մէջ Բաֆֆիի Թոմասէֆէնդիներից պակաս չեն։ Նոյնպիսի հրեշաւոր երևոյթներ յաճախ պատահել են, և կը պատահեն ամենայն ազգի շրջաններում, որոնք իրանց պախարակելի կրքերին յաղուրդ տալու նպատակաւ ամենայն անազնիւ և կեղտոտ միջոցներ ազատորէն գործ են դնում, միայն թէ նպատակհասս լինեն իրանք։ Զը նայելով որ շատ անգամ ընդհանուրի ինտերեսները ամենզգոհեր են դառնում իրենց կեղտոտ կապրիզներին, այնուամենայնիւ ոչինչ նշանակութիւն չունի նրանց համար ընդհանուրը, մինչդեռ անձնական շահ են նշմարում ընդհանուրի ոչնչութեան մէջ։

Այս տեսակ մարդկանց ճիշդ տիպարն է ներկայացնում այսօր մեր աչքումը «Մեղուն», որին շատ տարի է ներկայիս պահանջը, որին շատ անհաճելի է ըմբռնել զուտ ճշմարտութեան սկզբունքը, որը չէ կամենում համոզվել որ ազգայնութեան զոյութեան նեցուկ տարրն է հայրենիքը և լեզուն, որը վերջապէս չէ ուզում եկեղեցու չորս պատերից դուրս հայ ճանաչել։

«Մեղուի» ինքնահաւանութիւնը ծայրայեղութեան է հասնում։ Խմբագիրը իրանից զատ բոլորին սեփական համոզմունքից զուրկ, բնական հասկացողութիւնից ազատ և ազատ դատողութիւնից խորթ է համարում։ Ահա՛ ինքնահաւանութեան նողկալի պատկերը։

Բայց ես էլ կասեմ որ «Մեղուի» բոլոր արտայայտած գաղափարները, գրած յօդուածները և ծուռումուռ դատողութեամբ ու անորոշ եզրակացութեամբ մրոտած թղթերի տարածերը, հետևանք է իր սարսափելի բախտախնդրութեան և իր վատթար շահամոլութեան։ Շահամոլութիւն և բախտախնդրութիւն ասելով՝ պէտք է ապացուցանել փաստերով։ «Մեղուն» ի՞նչ վատութիւն նշմարեց «Մշակի» յայտնած նպատակի մէջ, որն էր «չը հալածել ու չատել այլադաւանս հային», որ նա այսքան ձիգ պաշտօնական խնդիր շինեց։ Դիցուք թէ «Մշակի» երգվեալ թշնամին է, բայց այսպիսի օգտակար միաք, մեր կարծիքով առիթ չը պէտք է տար «Մեղուին» իր սարսափելի հակակրութեան թոյնը թափել։

«Մեղուի» խմբագիրը այս ըստ բնականին արդիւնաւէտ քարոզը ծուռումուռ մեկնելով՝ իրան ձեռքում մի գործիք շինել ուզեց։ Իր սրտի գառնախորհուրդ գործարանի հալածումն մի բրիչ կազմեց, և նրանով կամեցաւ քակել ու արտաքսել ամբոխի յեսապէմ զլուխների ատելութեան քարերը, որով կարողանայ քարկոծել «Մշակի խմբագրին, կարծելով որ այդպիսով իր թերթի տարածմանը նպաստաւորած կը լինէ։ Վաղարշապատի մէջ անշարժ տիրող կրօնամոլութեան մթնոլորտին զոհված մի քանի իր նման ֆանատիկոսների համակրական ցոյցերը «Մեղուի» եռանդը արծարծեցին, և սկսեց դա խօսել օրէնքական բարձրութիւնից։ Ազգութիւն, հայրենիք, ցեղ, ամբողջութիւն և այլն ուզեց հասկացնել որ պարփակվում են եկեղեցու չոր ու ցամաք պատերի մէջ։ Լէֆֆերիսի լաւ աստուածաբանական հանճար է.... Նախապաշարված պատերի համակրութիւնը վայելելու, և «Մշակի» յարգը թարմ ոյժերի մատուցակոխ անելու պատրուակով, ամենաանազնիւ և ազգակործան միջոցների է դիմել, այն աստիճան դիւրահաւատ լինելով որ կարծում է թէ ամբողջութիւնը անպայման հպատակվելու է մի բախտախնդրի հեղինակութեանը, որին շատ խորթ է թվում ըմբռնել կենդանի կեանքի բարօրութեանը նպաստիչ սկզբունքն։ Ահա՛ այս երևոյթը ուրեմն բախտախնդրութիւն չէ, ի՞նչ է։

Էս ինձ թոյլ եմ տալիս «Մեղուին» մի հարցս առաջարկութիւն անել։ Թող նա փաստերով ապացուցանէ որ այժմեան մահմեդական պարսիկները բուն պարսիկներ չեն։ Որ նրանք կորցնելով իրենց զբաղաշատական օրէնքը և սրա հեղինակ մոգերին իրանց ատրուշաններովը, և փոխարէնը ընդունելով Աբաբիայի մարգարէի վարդապետութիւնը և նրա քարոզած Ալլահը, արգելք նրանով պարսկականութիւնը կորցրին, և պատուաստվեցան հագարական ազգութեանը կոճղին։ Պարսկական ազգային ինքնուրոյն յատկութիւնը, նրա առանձնացող արմատական տարրը և ազգութեան հիմնական պայմանները կնա՞լ գնացին կրօնական նոր վարդապետութեան լարբիրինթոսներին։ Թէ ազգութիւնը ընդունելով խոշի համոզմունքի առաջինից տարբեր երկրորդ առարկան, մնաց կրկին նոյն ազգութիւնը, ինչ որ էր յառաջ, իր ազգային սահմանացուցիչ յատկանիշներովը, որպիսին է հայրենիքը, լեզուն և ցեղը։ Ուրեմն թող «Մեղուն» հաճենայ այս հարցը վճռել և այնու յետ ևս, դու, երրորդը և չորրորդն էլ իրեն կընկերանանք, որպէս զի աւելի դիւրութեամբ քարկոծ անէ «Մշակի» խմբագրին, որ սա կրօնի նշանակութիւնը ազգութեան նշանակութիւնից աւարեր գաղափար ընդունելով՝ ազգի տունն է քանդում։

Յամառութեան չափազանցութիւնը մեր կարծիքով անգգայութեան և մեռելութեան նշան է։ «Մեղուի» խառնաշփոթ սկզբունքները ժամանակի սրընթաց հոսանքի անիւների ճնշողութեան տակ զսվելով և մաքրվելով կուղղվին անշուշտ. նա ժամանակով կը համաձայնվէ որ իր ներկայ վարդապետութիւնը լոկ կրօնասէրների համակրութիւնը դէպի ինքը քարշելու մտքի ծնունդ է միայն, որ իր ներկայ ուղղութիւնը որսորդական բարգաւանի ծածանող այն գործիքն է, որով որսորդները թռչունների աչքերը շլացնելով՝ դիւրութիւն են ունենում մոտուստ մահացնել նրանց։ Սակայն ցաւալի է որ մինչ այն ժամանակը անօգուտ թղթեր է մրոտելու, գուցէ և շատերի ֆանատիկոսութիւնը կը զրգռէ, որից տխուր հետևանքներ կարող են առաջանալ։

Ցաւալի է և այն ժողովրդի վիճակը, որի բարոյականութեան և մտաւոր կրթութեանը ներկայացուցիչ հանդիսանալ են նկրտում յանգուգն Պետրոսներ-Սիլիբուներ, Սուբ-Սէրեր-Սարսարիներ (ըստ «Մեղուի» յատուկ գիտնականի) իրենց նեխած-փրտած ազգասիրութեամբ։

Հմայակ

ՆԱՄԱԿ ՅԱՐԻՑԻՆԻՑ

22 հոկտեմբերի

Մենք Յարիցինի լուսաւորական հայերի փոքրիկ խումբը, որ հիմա նոր ազգի կենտրոնից, անհամբերութեամբ համտրում ենք վայրկեանները. Թէ երբ կը ստանանք մեր հայկական պարբերական Թերթը, որոնցից կը քաղենք մէկ մխիթարական լուր մեր ազգային ներկայ վիճակից, բայց մեր յոյսը մեծ մասամբ զուր է անցնում. ժամանակակից անհրաժեշտ հարցերի ընդհանրական վիճաբանութիւն։ Երբ մարդը նպատակ է «Մեղուի» կողմից բռնած ընթացքի վրա, չը գիտէ ինչ մտածէ։ Ակամայ մարդը մտաբերում է այն կամակոր երեխային, որ ամեն տեսակ անարգանք եւ պատիժ ստանում է իր ուսուցչից, բայց այնու ամենայնիւ չէ կրկնում այն բառը, որի համար ստիպում է նորան ուսուցիչը։ Այսպիսի արարք ճշմարիտ է, որ մեզանից ամեն մէկը մեր կեանքի մանկութեան օրերի մէջ—ոչ առանց բացառութեան—ունեցել ենք, սակայն եկել են օրեր, որ զղջացել ենք մեր կամակորութեան համար։ Իսկ «Մեղուն», որ այժմ երեխայ չէ, այլ կատարեալ չափահաս մարդ պէտք է լինի—այժմ արդէն քսաներեքերորդ տարեկան է—տակաւին երեխայական կամակորութիւնը չէ ցանկանում Թողնելու եւ չէ զըղջում ոչ իր անցեալի վրա եւ ոչ էլ ներկայի ու ապա գալի մասին մտածում։ Կամակորութիւն չէ արդեօք տեղ տալ մի այնպիսի անհատի նամակին, որպիսին է պ. Սարգիս Ղազարեան Նազարեանց։ Գարան Նազարեանցը միթէ չը գիտէ, որ ոչ մի լրագրի բաժանորդութեան փողը յետ չէ տրվում։ Բայց պ. Նազարեանցը եթէ չէ կամենում կարդալ «Մշակը», որովհետև լուսաւորդարի նոր գաղափարները նրա հնամտել գաղափարների համար անմտարեալի են,—խնդրենք Թողնի մեզ առանց կարդալու եւ եկող տարի այլ եւս չը գրվի, հաւատացած լինի, որ նրա կորուստը ոնաւ զգալի չի լինի ոչ «Մշակի» եւ ոչ այլոց։ Հրաւիրում ենք պարոնին մէկ անգամ կամակորութեան զղջմունքը մի կողմ դրած կարդալ «Մշակի» № 181 առաջնորդող յօդուածը «Վերջ չը կայ»։ Աղոթքը զորան է համարում դէպի անգութ զղջող գաղափարը։ Միամիտները միշտ շատ փստահաւանեամբ են խօսում եւ պարոնն էլ արտասանում է նամակի վերջում, որ «Մեղուն» բաց պաշտպան է ազգի շահերին։ Թող պ. Նազարեանցը խօսի միայն իր համար առանց ազգին խառնելու. մենք կարդրում ենք որ «Մեղուի» Թերթերից, որպէս գրում է Պ. Պօլսից Հայկակը, Թարգմանում են եւրոպացոց լեզուներով. յայնժամ այդ նրանց յիշած ազգի զրուցինը ինչ կը լինի, ոչ ապաքէն եւ նոքա տանջիկներից ոչ-ինչ բարձր տեղ կունենան։ Եւ տակաւին «բաց պաշտպան ազգային շահերի» տիտղոսը բարեհաճում են «Մեղուին» առատապէս տալ։ Բայց մեզ անհասկանալի է մինչեւ այժմ «Մեղուի» ազգային պաշտպանողութիւնը ինչի մէջն է արտայայտվել։ Եթէ դտնում է ազգային գաղափարների պաշտպանութիւնը «Մեղուի» յետամնաց գաղափարների մէջ,—պէտք է ասեմ՝ սաստիկ սխալվում է։

Խօսելով հասարակապէս ազգի ամրող ջուղեան կղմից, մենք վստահութեամբ ասում ենք, որ նոր սերունդը նոր գաղափարներ է սպասում լուսաւոր դարի առաջնորդներից, միանգամայն ուշք չը դարձնելով ոմանց պատաւական մաշված խօսքերին։

Աղասի Զախմախնազեանց

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Հոկտեմբերի 22

Ամսոյս 19-ին տեղիս հոգեւոր ուսումնարանի դասլիճում ուսուցչական խումբը տուեց մի ներկայացում հայերէն լեզուով յօգուտ զպրոցի։ Ներկայացրին «Զոզոպատած փստա» դրաման։ Ներկայացումն անսպասելի լաւ անցաւ եւ մեծ տպաւորութիւն արեց ժողովրդի վրա, որ մեծ բազմութեամբ լցրել էր դասլիճը։ Մեծ պատանեց Թիֆլիսում տեսնել այդ դրաման մշտական խմբի ներկայացումներից մէկում, եւ պէտք է խոստովանեմ, որ բացի բեմական շքեղութիւնից, որ անշուշտ ունի Թիֆլիսի Ամբարային Քատրոնը, սիրողների խմբի խաղը շատ փոքր տարբերութիւն ունէր դերասանների խաղից։ Գ. բժ. Կանկուեանցը, որ խաղում էր Լեգիրկի եւ Դիւբրսկի դերերը, ցոյց տուեց կատարեալ բեմական քանդար, մանաւանդ Լեգիրկի դերում։ Պարոնի խաղը համարձակ կարող եմ ասել պատիւ կը բերէր ոչ միայն սիրողին, այլ եւ մի ճշմարիտ դերասանին։ Միւս ներկայացնողներից արժանի են ամեն գովասանաց պ. պ. բժ. Ղազազեանցը, Գրիգորեանցը, Սամբոլցեանցը, Առարաչեանցը եւ Տիգրանեանցը։ Կանանց դերերը կատարում էին տ. Ղազազեանցը եւ օր. Ասանենանցը։ Տիկինը բաւականին լաւ էր իր դերում, իսկ օրիորդին կը ցանկայինք աւելի զգացմունք։

Կարսի հասարակութեանը մնում է միայն շնորհակալ լինել ուսուցչական խմբից, որ է եւ Քատերասիրաց խումբը։

Բացի զուարճութեանց, որ ստանում է ժողովուրդը Քատրոնից, վերջին՝ եկամուտները գնում են յօգուտ ուսումնարանի եւ ինչպէս լսում ենք, խումբը կանենում է մնեվայ ընդացքում տալ 10 ներկայացումներ, որոնցից առ նուազն կը մնայ ուսումնարանի համար 1000 բուլբ։ Ի նկատի առնելով տեղիս երկանա. գոյների անհանգստանալի նիւթական միջոցները, յիշեալ գումարը առնորդ չի լինի ուսումնարանի դրամարկղ։ Ամեն ինչ մի ամիս է, որ սկսվել է ուսումը, իսկ ոչ ոչինչ դեռ եւս միջոցներ է որոնում ուսումնարանի